# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
# ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնք
ՀՀ Արմավիրի մարզ գ.Գեղակերտ Մ.Մաշտոցի 30
էլ.փոստ khoy.community@gmail.com

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**20 մայիսի 2022 թ. N 69-Ա**

## ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 82-րդ հոդվածով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝**

Կողմ –12 Դեմ-0 Ձեռնպահ-0

1. Մեխակյան Արգիշտի ____________
2. Յայլոյան Լյուդվիկ ____________
3. Համբարձումյան Էդգար ____________
4. Գրիգորյան Լուսինե ____________
5. Գրիգորյան Վաչիկ ____________
6. Պետրոսյան Արտակ ____________

7. Միրզախանյան Սոֆիա ____________

8. Գևորգյան Աննա ____________

9. Ասատրյան Հրայր ____________

10. Ստեփանյան Արման ____________

11. Ենգիբարյան Լիլիթ ____________

12. Եղիազարյան Լյուդվիկ ____________

**ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄԵԽԱԿՅԱՆ**

2022 թվականի մայիսի 20

գ. Արշալույս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ

2022-2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

# ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Կազմել է՝ համայնքի ղեկավար Արգիշտի Մեխակյան

Հաստատվել է համայնքի ավագանու 20 մայիսի 2022թ. 69-Ա որոշմամբ

Խոյ

2022 թվական

# 1. Համայնքի ղեկավարի խոսք

ՀՀ Արմավիրի մարզի Խոյ բազմաբնակավայր համայնքի զարգացման հնգամյա ծրագիրը այն հիմնական փաստաթուղթն է, որը նախատեսում է առաջիկա հինգ տարիների համար համայնքի խնդիրների արդյունավետ լուծում և նպատակային գործընթացի իրականացում: Հնգամյա զարգացման ծրագիրը կազմվել է հաշվի առնելով ազգաբնակչության կարծիքը, համայնքի առկա հիմնախնդիրների առաջնահերթությունը և ֆինանսատնտեսական ռեսուրսների գնահատման մակարդակը: Բոլորս էլ քաջ գիտակցում ենք, որ մեր համայնքում դեռ շատ անելիքներ կան, որպեսզի այն դառնա զբոսաշրջության տարածաշրջանային կենտրոն՝ մաքուր, բարեկարգ, զարգացած ենթակառուցվածքներով, որտեղ բնակչությունը զբաղվում է գյուղատնտեսությամբ, փոքր և միջին ձեռնարկատիրությամբ, վերամշակող արտադրությամբ:

Խոյ համայնքում հիմնական խնդիր է հանդիսանում աշխատատեղերի բացակայությունը, որից էլ բխում են սոցիալ–տնտեսական մյուս հիմնախնդիրները: ՀՀԶԾ-ն իր մեջ ինչ որ չափով ներառում է նաև այնպիսի բաղադրիչներ, որոնց գործարկման դեպքում հնարավորություն կընձեռնվի որոշակի չափով առաջնորդող գաղափարներով նպաստել խնդրի լուծման խոչընդոտների վերացմանը:

ՀՀԶԾ-ը ենթադրում է նաև 2022-2026 թվականի բյուջետային ծրագրերն իրականացնելիս՝ որոշակի ռեսուրսներ ներդնելու դեպքում արդյունքների ձեռքբերում, միաժամանակ արմատավորելով նոր որակի և մակարդակի կառավարում, ձևավորելով ներդրված ռեսուրսների և ստացված արդյունքների միջև ինտեգրացված կապ, ապահովելով բյուջետային ծրագրի միջոցառումների ու գործողությունների կատարման թափանցիկությունն ու վերահսկման արդյունավետ մեխանիզմը:

Սա հնարավորություն է տալիս համայնքի զարգացման հնգամյա ծրագրի (ՀԶՀԾ) հիման վրա պլանավորել համայնքի առկա ֆինանսական միջոցները, դրանք օգտագործել խնայողաբար, արդյունավետ և հրապարակային:

Կարևորելով մասնակցային գործընթացները տեղական ինքնակառավարման համակարգում, (ՀՀԶԾ) այս ձևաչափով ամրագրվում է հաշվետվողականությունը, շարունակականությունը, ծրագրերի և խնդիրների կատարման առաջնահերթությունների հստակ սահմանումը, բյուջետավարման գործառույթների հստակ վերաբաշխումն ու չափելիությունը:

Որդեգրելով աշխատանքային նոր ռազմավարություն, ՀՀԶԾ-ով առավել կարևորվում են բնակչությանը համայնքային ծառայությունների արդյունավետ մատուցումը և համայնքի խնդիրների աստիճանական լուծումը:

Այս բաղադրիչներով ներառյալ Խոյ համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը կնպաստի բնակչության բարեկեցության բարելավմանը, երիտասարդ սերնդի դաստիարակմանը և մեր համայնքի ներդաշնակ զարգացմանը:

Ծրագիրը իրենից ենթադրում է այնպիսի փաստաթուղթ, որում ընդգրկվում են համայնքի համար կենսական նշանակություն ունեցող խնդիրներ, որոնց լուծման փուլերը դառնում են ծրագրի բաղադրիչներ: Դրանց լուծմանն է ուղղվում հետագա տարիների գործունեությունը:

## 2. Համայնքի իրավիճակի նկարագրություն

### 2.1 Համայնքի ընդհանուր նկարագրություն

Խոյ խոշորացված համայնքը Արմավիրի մարզի 7 համայնքներից մեկն է: Խոյ խոշորացված համայնքը կազմավորվել է 2021 թվականի դեկտեմբերի 5-ին ՀՀ Արմավիրի մարզում կայացած ՏԻՄ ընտրությունների արդյունքում՝ «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2021 թվականի սեպտեմբերի 24-ի ՀՀ ՀՕ-328-Ն օրենքով:

Փոփոխության արդյունքում՝ ՀՀ Արմավիրի մարզի Խոյ գյուղական համայնքը, Ամբերդ, Արագած, Արշալույս, Այգեշատ, Աղավնատուն, Գեղակերտ, Դաշտ, Դողս, Լեռնամերձ, Ծաղկալանջ, Ծաղկունք, Ծիածան, Հայթաղ, Հովտամեջ, Մոնթեավան, Մրգաստան և Շահումյան բնակավայրի միավորումից: Համայնքի կենտրոնը Գեղակերտ բնակավայրն է:

Գեղակերտ համայնքի պատմական անցյալի վկան 13-րդ դարում կառուցված Սուրբ Հարություն եկեղեցին է, որը մինչ այժմ գործող է: 1928 թվականի Թուրքմենչայի պայմանագրից հետո, երբ Արևելյան Հայաստանը միացավ Ռուսաստանին, Պարսկաստանի Սալմաստ հայաշատ գավառի Ուրմիա գյուղաքաղաքի Սամաղար բնակավայրից մեծ թվով գաղթականներ են եկել և տարածքը անվանել են Սամաղար: Հետագայում՝ 1978 թվականին, համայնքի օտարածին անունը փոխելու նպատակով այն վերանվանվել է Գեղակերտ, 1991 թվականին այն կրկին վերանվանվել է Սամաղար: Սկսած 2006 թվականից համայնքն անվանվում է Գեղակերտ:

Ներգաղթածները հիմնականում զբաղվել են այգեգործությամբ և գինեգործությամբ, զարգացրել են առևտուրը և արհեստները: Ժամանակին մեծ համբավ է վայելել Սամաղարի գինին, որը Եփրատ, Տիգրիս գետերով հասցրել են Միջին Արևելք, ինչպես նաև արտահանել են Արմավիր, Կրասնոդար, Դոնի Ռոստով և այլն:

Խորհրդային կարգերի հաստատումից հետո Սամաղար համայնքը եղել է շրջկենտրոն, իր մեջ ներառելով Էջմիածնի, Հոկտեմբերյանի, Թալինի, Արտաշատի, Ապարանի և Աշտարակի մի շարք բնակավայրեր և 1934 թվականին իր տեղը զիջել է Էջմիածնին:

Գեղակերտ համայնքի կենտրոնում կա երեք հուշակոթող: Դրանցից մեկը հավերժացնում է Հայրենական Մեծ պատերազմում զոհված 117 սամաղարցիների հիշատակը, իսկ մյուս հուշարձանը կառուցված է ի պատիվ արցախյան ազատամարտիկների, որոնցից երեքը զոհվեցին այդ պատերազմում: Հուշարձանը կառուցվել է Գեղակերտ համայնքի պատվավոր քաղաքացի Ռուստամ Նիկողոսյանի նվիրատվությամբ: Համայնքի նախկին բնակիչ Վաղինակ Խաչատրյանի նվիրատվությամբ համայնքի կենտրոնում կառուցվել է խաչ- հուշակոթող՝ նվիրված 2016 թվականի քառօրյա պատերազմի զոհերին:

Գեղակերտը գտնվում է Արարատյան դաշտավայրում՝ Արմավիրի վարչական տարածքում, ծովի մակերևույթից 900մ բարձրության վրա: Մարզկենտրոնից տեղակայված է 25կմ հեռավորության վրա՝ դեպի հյուսիս-արևմուտք:

Խոյ համայնքի վարչական տարածքը կազմում է 11181.03 հա, այդթվում՝ բնակավայրերի

տարածքը՝ 2092.40 հա, արդյունաբերական և արտադրական նշանակության հողեր՝ 337.93 հա, հատուկ պահպանվող տարածքներ՝ 273.65 հա, հատուկ նշանակության՝ 1.13 հա: Խոյ համայնքի տնտեսության առաջատար ճյուղը և բնակչության հիմնական զբաղվածության ոլորտը գյուղատնտեսությունն ու անասնապահությունն է: Անասնաբուծության հիմնական ճյուղը խոշոր եղջերավորներն են՝ 3617 գլուխ, որից կովեր 1214 գլուխ, երինջ - 1046 գլուխ, արտադրող ցուլեր -117 գլուխ: Ոչխարներ՝ 5875, խոզեր՝ 1769: Տարածված է նաև մեղվապահությունը՝ 1185 մեղվաընտանիք, թռչունների թիվը՝ 81071:

Ամբերդ բնակավարը ունի երկար տարիների պատմություն, այդ է վկայում գյուղում կառուցված Թովմաս Առաքյալի անվան եկեղեցին և գերեզմանոցը, որը ապացուցում է , որ գյուղը բնակեցված է եղել Թիֆլիսահայերով 17-րդ դարում: Գյուղը գտնվում է ծովի մակարդակից 850մ բարձրության վրա: Ամբերդ գյուղը գտնվում է Քասախ գետի ափին, գյուղի հյուսիսային կողմում Քասախ գետին է միանում Ամբերդ վտակը: Գյուղը սահմանակից է Արագածոտնի մարզի Ոսկեհատ և Ոսկեվազ գյուղերի հետ: Գյուղի ծայրամասում է վերջանում Աշտարակի ձորը: Արմավիրի մարզից գյուղը սահմանակից է Լեռնամերձ, Աղավնատուն, Արագած, Դողս, Այգեշատ գյուղերի հետ:

Արագած բնակավայրը գտնվում է Արմավիրի մարզում: Գյուղը ձևավորվել է 1828 թվականին, ռուս-պարսկական պատերազմից հետո՝ Թուրքմենչայի պայմանագրով Պարսկաստանի Խոյի Սալմաստ գավառից գաղթած հայերով: Մինչև 1946 թվականը գյուղը անվանվել է Խզնաուզ, Խզինար, Խինուաուզ: 1946 թվականից գյուղն Արագած լեռան անունով կոչվել է Արագած, քանի որ գտնվում է Արագած լեռան փեշերին, և գյուղից այն կողմ էլ հենց սկիզբ է առնում Արարատյան դաշտավայրը:

Գյուղը գտնվում է ծովի մակերևույթից 908 մբարձրության վրա, Արարատյան դաշտավայրում :

Կլիման չոր է, խիստ ցամաքային, օդի տարեկան միջին ջերմաստիճանը տատանվում է 9-11 $^{0}$ C-ի սահմաններում: Շոգ օրերը տևում են չորս ամիս, հուլիս և օգոստոս ամիսներին օդի ջերմաստիճանը հասնում է մինչև 41 $^{0}$ C: Տարեկան տեղումները տատանվում են 250-350 մմ-ի սահմաններում:

Ձմեռը չափավոր ցուրտ է , միջին ջերմաստիճան -4 –ից -6 $^{0}$ C, իսկ նվազագույնը՝ -32 $^{0}$ C :

Արագած գյուղը գտնվում է մարզկենտրոնից 25 կմ հեռավորության վրա, իսկ շրջկենտրոնից՝ 10 կմ:

Գյուղացիների հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է , աճեցվում են տարբեր տեսակի բանջարեղեն ու մրգեր: Արագած գյուղն ունի միջնակարգ դպրոց, որը կրում է զոհված ազատամարտիկ Մեխակ Մեխակյանի անունը, մշակույթի տուն, բուժամբուլատորիա, մանկապարտեզ: Գյուղում գործում է պարի խմբակ և բռքսի խմբակ:

Արշալույս բնակավայրը 1828 թվականին հիմնադրված Քյորփալու անվամբ: Գյուղում առկա են եղել մի քանի տնտեսություն, որոնց թիվը հետագայում աճել է 1915 թվականին թուրքական յաթաղանից պրծած Արևմտյան Հայաստանից ներգաղթած հայրենակիցների շնորհիվ, որոնք հիմնել են շինություններ, մասնակցություն են ունեցել գյուղի հետագա զարգացմանը: 1935 թվականին գյուղն վերանվանվել է Արշալույս անվամբ: 1946 թվականից տարբեր երկրներից գյուղ են եկել թվով մեծ մեր հայրենակիցներ, որոնց շնորհիվ գյուղը մեծացել, հզորացել և դարձել է բնակության համար հարմարավետ ապրելատեղ:

Սարդարապատի ճակատամարտի օրերին Իգդիրի հետևակային դիվիզիան ու հատուկ հեծելազորային խումբը, ինչպես նաև հայ հոգևորականներն ու աշխարհազորայինները, Քյորփալու գյուղի տարածքից ճակատագրական հարված են հասցրել թուրքերի մեծաքանակ զորքին: Հերոսամարտին ակտիվ մասնակցություն են ցուցաբերել նաև գյուղի բնակիչները:

1937 թվականին Հայաստանում տեղի է ունեցել կոլեկտիվացում, ինչպես բոլոր գյուղերը Արշալույս գյուղը ևս նրանց հետ անցել է կոլետիվացման շրջան: Արշալույսցիները ակտիվ կերպով իրենց նվիրել են կոլեկտիվացման գործին: Գյուղում հիմնվել է կոլտնտեսություն, համագյուղացիները իրենց սեփական հողը, գյուղատնտեսական գործիքները, անասունները նվիրել են կոլտնտեսությանը:

1961 թվականին շահագործման է հանձնվել գյուղի մշակույթի տունը, որի կառուցման աշխատանքների տևողությունը եղել է մոտ 14 տարի: Դրանից հետո գյուղն ապրել է բուռն զարգացում, կառուցվել են զանազան շինություններ, անասնագոմեր, մեքենատրակտորային պարկեր, պահեստներ և այլ շինություններ:

Գյուղում զարգացել է նաև գյուղատնտեսությունը, անասնապահությունը, խոզաբուծությունը և թռչնաբուծությունը: Սկզբնական շրջանում գյուղը զբաղվել է բամբակագործությամբ և այգեգործությամբ, որից հետո սկսել են մշակել բանջարաբոստանային կուլտուրաներ, որը նպաստել է գյուղի կոլտնտեսության հարստացմանը: Այդ տարիների ընթացքում գյուղում կատարվել են լուսավորության և գազաֆիկացման աշխատանքներ:

1988 թվականին կառուցվել է Հայրենական Մեծ պատերազմում զոհված հայրենակիցներին նվիրված հուշարձան կոթող:

Գյուղի երիտասարդությունը ակտիվ մասնակցություն է ունեցել Արցախյան պատերազմին, շատերը իրենց կյանքը նվիրաբերել են Արցախի ազատագրմանը: 1995 թվականին կառուցվել է հուշարձան նվիրված Արցախյան ազատամարտի հերոսներին, որի միջոցով երախտապարտ արշալույսցիները իրենց հարգանքի տուրքն են մատուցել համայնքի սրբազան հողում ամփոփված, հերոսի մահով ընկած յոթ համագյուղացիների շիրիմներին:

Գյուղի մասին հիշատակումներ կան Կոմիտասի կենսագրության էջերից: Ճեմարանում ուսանելու տարիներին Սողոմոնը հյուրընկալվում է իր դասընկերոջ տանը Քյորփալու գյուղում և առաջին անգամ շինականի տանը լսում է ժողովրդական երգ և ձայնագրում այն:

Մարզկենտրոնից գտնվում է 17 կմ հեռավորության վրա, իսկ մայրաքաղաքից՝ 25 կմ: Այստեղով է անցնում Երևան – Արմավիր մայրուղին:

Գյուղը գտնվում է Արարատյան դաշտում ծովի մակերևույթից 920 մ բարձրության վրա: Կլիմայական պայմանները կիսաանապատային, չոր ցամաքային են: Ամռանը միջին ջերմաստիճանը + 25 $^{0}$C , ձմռանը՝ - 5$^{0}$ C: Տեղումների միջին քանակը 300մմ :

Գյուղի բնակիչների հոգևոր կյանքում մեծ դեր է կատարում <<Սուրբ Մարիամ Աստվածածին>> եկեղեցին: Գյուղում գտնվում է նաև Սուրբ Կարապետ Սրբավայրը, որտեղ ամեն տարի Սուրբ Հարության տաղավար տոնին հաջորդող կիրակի օրը կատարվում է ուխտագնացություն:

<u>Այգեշատ</u> գյուղը գտնվում է մարզի հյուսիս–արևելյան մասում, ծովի մակերևույթից 870մ բարձրության վրա, նախալեռնային գոտի է, գտնվում է Ուրց-Կոտայք-Շամիրամ և Մերձարաքսյան գոտիներում, մարզկենտրոնից հեռավորությունը 32 կմ է, մայրաքաղաքից՝ 30կմ: Գյուղի կլիման ձմռանը ցուրտ է, ամռանը՝ շոգ, հաճախ դիտվում է երաշտ և ցրտահարություն:

Համայնքն ունի 563.84 հա հողատարածք: Ավելի քան 1500 տարեկան է:

Աղավնատուն գյուղը գտնվում է պատմական Մեծ Հայքի Այրարատ նահանգի Արագածոտն գավառի հարավում, քառագագաթ Արագած լեռան հարավային ստորոտում, ծովի մակերևույթից 875մ բարձրության վրա: Աղավնատուն գյուղը եղել է մարդկության բնակության ամենահին օրրաններից մեկը : Այդ են վկայում վերջին տարիներին նրա շրջակայքում կատարված ուսումնասիրություններն ու հետազոտությունները, որոնց ընթացքում գտնվել են նախնադարյան համայնական հասարակության ժամանակին վերաբերվող քարե գործիքներ, խեցեղեն մնացորդներ, բնակության վայրերի հետքեր, դամբարաններ: Աղավնատուն գյուղի շրջակայքում կան բազմաթիվ հին հուշարձաններ, ճարտարապետական կառույցներ, իշխանական դամբարան և այլն: Նրանցից ամենահինը Բերդ ամրոցն է : Այն շրջապատված է պարիսպով, որին կից արդեն քրիստոնեական շրջանում կառուցվել են մի քանի բուրգեր , որոնցից ներկայումս միայն մեկը գոյություն ունի:

Բագրատունիների թագավորության ժամանակ Բերդի տերերը նրա մեջ կառուցել են եկեղեցի ՝ սրբատաշ կարմիր տուֆից: 13-14-րդ դարերում կառուցվել է իշխանական դամբարանը, որին անվանել են <<Գյունբազ>>, այն եղել է ուխտատեղ, որտեղ կատարվել են բազմաբնույթ ծիսակատարություններ, երգել ,պարել , զվարճացել են:

Գյուղի <<Բաղբաղներ>> կոչվող այգիների շրջանում է գտնվում <<Կարմրավոր>> սրբավայրը, որի ներսում գտնվում է տապանաքար՝ փորագրված խաչով: Սրբավայրի շրջակայքում կան բազմաթիվ տապանաքարեր: Գյուղի ներկայիս գերեզմանատանը կից գտնվում է <<Սուրբ Կարապետ>> սրբավայրը, որտեղ կան բազմաթիվ քարաբեկորներ և մեծ խաչքար:

2012 թվականի հոկտեմբերի 21-ին Աղավնատուն գյուղում բացվել է <<Սուրբ Աննա>> եկեղեցին: Եկեղեցու օծման արարողությունը կատարել է Արմավիրի թեմի առաջնորդ Տեր Սիոն Եպիսկոպոս Ադամյանը Արմավիրի թեմի հոգևոր դասի մասնակցությամբ: Եկեղեցու բակում տեղադրված են 17 խաչքարեր, որոնց հեղինակը քանդակագործ Ռուբեն Նալբանդյանն է: Եկեղեցին կառուցվել է բարերար Վահան Ավագյանի կողմից:

Աղավնատուն գյուղը գտնվում է մարզկենտրոնից 30կմ հեռավորության վրա: Գյուղի կենտրոնով անցնող ճանապարհը միակ կարճ ճանապարհն է , որը կապում է Արմավիրի և Արագածոտնի մարզերը: Գյուղի կենտրոնում է գտնվում համայնքապետարանի շենքը, մշակույթի տունը, հուշարձան համալիրը:

Գյուղի ազգաբնակչությունը հիմնականում զբաղվում է այգեգործությամբ, դաշտային մշակաբույսերի աճեցմամբ, ինչպես նաև անասնապահությամբ:

Կլիման չոր է, խիստ ցամաքային: Օդի տարեկան միջին ջերմաստիճանը տատանվում է 9-11˚C-ի սահմաններում: Շոգ օրերը տևում են ավելի քան չորս ամիս՝ուղեկցելով չոր եղանակներով: Հուլիս և օգոստոս ամիսներին օդի միջին ջերմաստիճանը 25-30 ˚C է, իսկ առավելագույնը՝41,5˚C: Տարեկան տեղումները տատանվում են 250-350մմ-ի սահմաններում: Ձմեռը չափավոր ցուրտ է, հունվարի միջին ջերմաստիճանը -4 ˚C-ից -6 ˚C է, նվազագույնը՝ -32 ˚C:

Գեղակերտ գյուղը գտնվում է Արմավիր տանող ճանապարհի վրա, Արմավիրի մարզի վարչական տարածքում, մարզկենտրոնից 25 կմ հեռավորության վրա՝դեպի հյուսիսարևմուտք, ծովի մակերևույթից 900մ բարձրության վրա, իսկ Երևանից 25 կմ հեռավորության վրա: Պետական սահմանից հեռու է 30կմ, մոտակա երկաթուղուց՝ 3կմ, ՀԱԷԿ-ից 10կմ:

Գյուղի կլիման չոր է , թույլ տեղումներով, ձմռանը չոր ցրտեր, կայուն ձյունածածկ լինում է ոչ բոլոր տարիներին: Մթնոլորտային տեղումները սակավ են, իսկ լինելու դեպքում հորդառատ:

Հողի մակերևույթից գոլորշիացումը մեծ է: Մթնոլորտային տեղումների տարեկան միջինը

տատանվում է 200-270մմ սահմաններում, որը խիստ անբավարար է անջրդի պայմաններում գյուղատնտեսական մշակաբույսերի մշակության համար: Օդի տարեկան միջին ջերմաստիճանը կազմում է +11$^0$C:

Դաշտ գյուղը հիմնադրվել է 1926 թվականից, Երևանից 25 կմ, մարզկենտրոնից 35 կմ հեռավորություն, բարձրությունը ծովի մակերևույթից 860մ:
Գյուղի միջով անցնում է միջպետական Մ-3 մայրուղին:
Դողս գյուղը գտնվում է Արարատյան դաշտավայրում, Էջմիածին քաղաքից 8 կմ հյուսիս-արևմուտք:
Գյուղը գտնվում է ծովի մակարդակից 900 մ բարձրության վրա:
Գյուղում գործում է 19-րդ դարում կառուցված եկեղեցի:
Գյուղի վարչական տարածքը 385.57 հա է, բնակելի կառուցապատման համար տնամերձ հողերը 82.56 հա է: Բնակավայրը տարածաշրջանային կենտրոնից գտնվում է 8 կմ, մարզկենտրոնից 35 կմ, մայրաքաղաքից 30 կմ հեռավորության վրա: Գյուղը միջհամայնքային ճանապարհներով կապված է Աղավնատուն, Ամբերդ, Ծիածան և Հովտամեջ գյուղերի հետ: Կլիման բնակավայրում ամռանը շոգ-չորային է, ձմռանը ցուրտ՝ հիմնականում չափավոր, գարնանը հաճախակի լինում են ցրտահարություններ և կարկտահարություններ:
Գյուղում հանքավայրեր և արտադրական ձեռնարկություններ չկան:
Լեռնամերձ գյուղն ունի երկար տարիների պատմություն: Գյուղը գտնվում է ծովի մակարդակից 900մ բարձրության վրա: Լեռնամերձ գյուղը գտնվում է Ամբերտ գետի ափին: Գյուղը սահմանակից է Արագածոտնի մարզի Ոսկեհատ գյուղի և 5-րդ սովխոզի հետ: Գյուղի ծայրամասում է վերջանում Աշտարակի ձորը: Արմավիրի մարզից գյուղը սահմանակից է Ամբերդ և Աղավնատուն գյուղերի հետ:
Ծաղկալանջ գյուղը հիմնադրվել է 1820-ական թվականներին, Երևանից 27կմ, մարզկենտրոնից 22 կմ հեռավորություն, բարձրությունը ծովի մակերևույթից 800մ:
Ճարտարապետական հուշարձաններից նշանավոր է Սուրբ Ամենափրկիչ եկեղեցին /16-րդ դար/:
Գյուղի միջով անցնում է միջհամայնքային մայրուղին:
Ծաղկունք գյուղը կազմավորվել է 1920-ական թվականներից: Գյուղը նախկինում ունեցել է Այլանլու, Այլանլու Վերին անվանումները: 1946 թվականին գերագույն խորհրդի որոշմամբ գյուղը վերանվանվել է Ծաղկունք: Գյուղը տեղակայված է Քասաղ գետի ձախ ափին, Էջմիածին-Արմավիր խճուղու մոտ, Էջմիածնից 2 կմ հյուսիս-արևմուտք: Գյուղը բնակեցված է եղել Իրանից, Արևմտյան Հայաստանից 1946 թվականին հայրենադարձ եղած բնակիչներով:
Գյուղը ունի բարենպաստ աշխարհագրական դիրք, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 25կմ, Երևան-Էջմիածին մայրուղուց՝ 2կմ,Երևանից՝ 25կմ, Զվարթնոց օդանավակայնից՝ 10կմ:
Գյուղը տեղակայված է Արարատյան դաշտավայրի գոտում, ծովի մակերևույթից 1900 մ բարձրության վրա: Կլիման բարենպաստ է ձմեռը միջինից ցուրտ է, ամռանը՝ շոգ և քամոտ:
Խմելու ջուրը քաղցրահամ է և բարձրորոկ, որը մատակարարվում է Նազրվանի և Բազմաղբյուրի խորքային հորերից:
Ծիածան / նախկին Գրամփա/ գյուղի վարչական տարածքը կազմում է 309 հա, գտնվում է ծովի մակերևույթից 890մ բարձրության վրա, Արարատյան դաշտավայրում, Քասախ գետի ափին, մարզկենտրոնից 25 կմ հեռավորության վրա:

Կատարվել են պեղումներ, որի ընթացքում հայտնաբերվել են մի շարք ստորգետնյա շենքեր, խեցեղեն զարդեր, մետաղյա իրեր: Քասախ գետի հունի մոտ գտել են սև գույնի կարաս, որն ունի 4000 տարվա պատմություն:
Գյուղը հնում Մեծամորի ձուլարանին կավ է մատակարարել:
Հին պատմական աղբյուրներից տեղեկություններ կան, որ Ալեքսանդր Մակեդոնացու մի զորավար՝ Գրամփի անունով պատերազմել է այս տարածքում և հաղթել, որի անունով էլ կոչվել է գյուղը՝ Գրամփա, իսկ 1967թվականից՝ Ծիածան:
Գյուղը գազաֆիկացված է, կա հեռախոսային կապ, շուրջօրյա խմելու ջրով ապահովված են բոլոր բնակարանները:
Համայնքը ունի մշակույթի տուն, գրադարան, եռահարկ դպրոց՝ սպորտ դահլիճով, բուժկետ, փոստային բաժանմունք:
Գյուղի կլիման ձմռանը ցուրտ է, ամռանը՝ շոգ:
Համայնքի բնակչությունը հիմնականում զբաղվում է դաշտային և ջերմոցային մշակաբույսերի աճեցմամբ, այգեգործությամբ և անասնապահությամբ:
<u>Հայթաղ</u> գյուղը գտնվում է Արարատյան դաշտի հյուսիս –արևելյան գոգավորության վրա: Բարձրությունը ծովի մակերևույթից 800մ է: Գյուղի հատակագիծը հարմարեցված է բնական պայմաններին կապված ռելիեֆից: Հայթաղի համայնապատկերի հարավային մասում ճերմակազարդ Մասիսներն են և Արարատյան դաշտը: Արևելյան մասում Երևանն է իր գեղեցիկ տեսարաններով: Տեսանելի է նաև Արագած լեռը հյուսիսից և Արայի լեռը հյուսիս –արևելքից:
Հայթաղ գյուղի վարչական տարածքը զբաղեցնում է 1240,63 հա: Հեռավորությունը մայրաքաղաքից 25կմ, մարզկենտրոնից 20կմ: Գյուղի տարածքով անցնում է Երևան-Էջմիածին-Արմավիր հանրապետական նշանակության ճանապարհները:
<u>Հովտամեջ</u> գյուղը /նախկին Մուղան/, հիմնադրվել է՝ 1831 թվականին, Երևանից ունի 23կմ, մարզկենտրոնից 25կմ հեռավորություն,ավտոմայրուղուց՝ 3կմ, երկաթուղուց՝ 20կմ, ՀԱԷԿ-ից 15կմ: Բարձրությունը ծովի մակարդակից 885մ: Սահմանակից է Գեղակերտ, Ծիածան, Առատաշեն գյուղերին:
<u>Մոնթեավան գյուղը</u> գտնում է Արմավիրի մարզի հյուսիս-արևելյան մասում, սահմանակից է Էջմիածին քաղաքային և Նորակերտ, Շահումյան գյուղերին: Մարզկենտրոնից գտնվում է 33 կմ հեռավորության վրա, Էջմիածին քաղաքից՝ 6 կմ:
Մոնթեավան գյուղի նախկին անունը առաջացել է գյուղում խորհրդային շրջանում գտնվող Շահումյանի թռչնաֆաբրիկայից: 1950-ական թվականների սկզբին գյուղի տարածքում սկսվել է թռչնաբուծական ֆաբրիկայի կառուցումը: 1953 թվականին ֆաբրիկան շահագործման է հանձնվել: Թռչնաբուծական ֆաբրիկայում աշխատելու նպատակով Հայաստանի նախկին ԽՍՀՄ-ի տարբեր բնակավայրերից գյուղ են տեղափոխվել և հիմնական բնակություն հաստատել տարբեր տարիքի և զբաղմունքի աձինք: Նախկին ֆաբրիկայի առկայության պատճառով գյուղը անվանվել է Շահումյանի թռչնաֆաբրիկա: 2002 թվականին ՀՀ տնտեսական դատարանի կողմից թռչնաֆաբրիկան լուծարվել է և սնանկ ճանաչվել: Բայց թռչնաբուծությունը շարունակում է մնալ բնակչության հիմնական զբաղմունքը:
2021 թվականի Կառավարության որոշմամբ գյուղը վերանվանվել է Մոնթեավան՝ ի պատիվ Արցախյան հերոս Մոնթե Մելքոնյանի:
Գյուղը ծովի մակարդակից բարձր է 850մ, վարչական տարածքը կազմում է 293,8 հա, որից տնամերձ՝ 38,7 հա: Աշխարհագրական դիրքը նախալեռնային է, կլիմայական պայմանները՝ բարենպաստ: Գյուղի կլիման չոր ցամաքային է , ցուրտ սակավաձյուն, պարզկա ձմեռներով ու տատանվում է -3-ից -25$^0$ C, ամռանը՝ 13-ից 39$^0$ C: Տարավա եղանակներից համեմատաբար լավ է գարունը, ամառը տևական է ՝ 4,5-5 ամիս: Տարեկան տեղումների քանակը կազմում է 200-ից 250մմ, վերջին տարիներին նկատվում է տևական

ձնածածկույթի սակավություն:
Մրգաստանը գյուղի ներկայիս անվանումն է: Գյուղի պատմական անվանումները՝ Խոջիլար, Հաջիլար, Հաջիլեր: Գյուղի հիմնադրման ժամանակաշրջանը՝ 1828 թ.: Սահմանակից է՝ Շահումյան, Այգեշատ, Դողս, Ծիածան, Ծաղկունք և Վաղարշապատ գյուղերին: Գյուղի մակերեսը՝ 296,6 հա է, հեռավորությունը մայրաքաղաքից՝ 28կմ: Բնակչության թիվը՝ 1454 մարդ, բնակչության կազմը՝ հայեր և եզդիներ, տնային տնտեսությունների թիվը՝ 380: Կրթական հաստատություններից համայնքում գործում է՝ միջնակարգ դպրոցը, 156 աշակերտով: Գյուղում գործում է գրադարան՝ 5000 կտոր գրքով: Բնակչության հիմնական զբաղմունքը՝ գյուղատնտեսությունն և անասնապահությունն է: Հոգևոր կառույցներից գյուղում գործում է ՝ 18-րդ դարում կառուցված Սուրբ Հովհաննես եկեղեցին, գյուղի արևմտյան հատվածում կան միջնադարյան խաչքարեր: Գյուղը գտնվում է Վաղարշապատի տարածաշրջանում,Վաղարշապատ քաղաքից 4կմ հյուսիս-արևմուտք: Մարզկենտրոնից գտնվում է 28կմ հեռավորության վրա:Գյուղը Մրգաստան է վերանվանվել՝ 1935 թվականին: Մրգաստան գյուղը գտնվում է Արմավիրի մարզի հարավ-արևմտյան մասում: Գյուղի բնակչության նախնիների մի մասը 1828-1829թթ և 1915-1916թթ տեղափոխվել են Արևմտյան հայաստանի Սուրմալուի, Խնուսի, Ալաշկերտի և Պարսկահայաստանի Խոյ և Սալմաստ գավառներից: 1940-1950թթ այստեղ են հաստատվել նաև Լիբանանից հայրենադարձվածները: Գյուղում գործող դպրոցը 1996 թ.-ին անվանակոչվել է Արցախի հերոսամարտում զոհված ազատամարտիկ, նույն դպրոցի շրջանավարտ՝ Կամո Հարությունյանի անունով:
2012 թվականին դպրոցը հիմնովին վերանորոգվել է, իսկ 2013 թվականին դպրոցում իրականացվել է կաթսայատան և լոկալ ջեռուցման համակարգի կառուցում:
1984 թվականին ճարտարապետ Կ. Գաբրիելյանի նախագծով համայնքում տեղադրվել է ՝ Հայրենական Մեծ պատերազմում զոհված զինվորներին նվիրված հուշարձան, որը 2010 թվականին վերանորոգվել է գյուղի կողմից, կառուցվել է պատվանդան շրջանաձև տեսքի՝ ներքևի մասը խոտածածկ է, տեղադրվել է զոհվածների անուններով 4 մարմարե հուշատախտակ, որոնց վրա քանդակված են՝ 38 զոհերի անուններ:
Գյուղում գործում է մեկ բուժ. ամբուլատորիա, երկու բուժքույրով, կառուցված 2009 թվականին Ամերիկյան <<Փրկեք երեխաներին>> կազմակերպության հետ համատեղ, որի ներդրումն կազմել է ՝ 31 %, իսկ համայնքի ներդրումը՝ 69,1%:
Ծրագրի ընդհանուր արժեքը կազմել է ՝2500000 դրամ:
Գյուղը ՝ 2014 թվականին ձեռք է բերել գյուղ. տեխնիկա, մասնավորապես՝ տրակտոր, որի համար համայնքի կողմից հատկացվել է՝ 4000000 դրամ, իսկ 3200000 դրամը նվիրաբերվել է կառավարության կողմից:
Շահումյան գյուղը հիմնադրվել է ՝ 1828 թվականից, Երևանից՝ 30կմ, մարզկենտրոնից 30կմ հեռավորություն, բարձրությունը ծովի մակերևույթից՝ 900մ:
Ճարտարապետական հուշարձաններից նշանավոր է <<Սուրբ Մարիամ Աստվածածին>> եկեղեցին, որը կառուցվել է բարերար Կարեն Հովհաննիսյանի հովանավորությամբ 2010 թվականին: 2012 թվականին հիմնովին վերանորոգվել է <<Սուրբ Թուխ Մանուկ>> մատուռը:
Գյուղի միջով անցնում է միջպետական Մ-3 մայրուղին, ընդհանուր երկարությունը՝ 1,5կմ:

## 2.2 Տնտեսական բնութագիր

Համայնքում գործում է 11 բուժամբուլատորիա ՀՈԱԿ, 15 հանրակրթական դպրոց ՀՈԱԿ, 1 մարզադպրոց, 3 մանկապարտեզ, 3 երաժշտական և գեղարվեստական դպրոցներ, 15 գրադարան, մասնավոր ընկերություններ և ձեռնարկություններ:

Համայնքի բնակչության թիվն ու սեռատարիքային կազմը (2022թ-ի հունվարի 1-դրությամբ):

Ա.1

| Հ/Հ | Համայնքի անվանումը | Բնակչության թիվը | Արական | Իգական | Տարիքային խումբ | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | 0-3տ | 3-6տ | 7-17տ | 18-63տ | 63-ից բարձր |
| 1 | Ամբերդ | 1633 | 756 | 877 | 60 | 58 | 243 | 1162 | 122 |
| 2 | Արագած | 3030 | 1476 | 1554 | 115 | 110 | 255 | 2195 | 355 |
| 3 | Արշալույս | 4172 | 2018 | 2154 | 242 | 182 | 606 | 2760 | 382 |
| 4 | Այգեշատ | 2193 | 1057 | 1136 | 108 | 113 | 328 | 1457 | 187 |
| 5 | Աղավնատուն | 3594 | 1765 | 1829 | 168 | 185 | 484 | 2273 | 484 |
| 6 | Գեղակերտ | 2764 | 1374 | 1390 | 77 | 91 | 461 | 1853 | 282 |
| 7 | Դաշտ | 1086 | 536 | 550 | 31 | 69 | 148 | 723 | 163 |
| 8 | Դողս | 1503 | 801 | 702 | 42 | 49 | 204 | 1025 | 183 |
| 9 | Լեռնամերձ | 525 | 296 | 229 | 18 | 24 | 65 | 373 | 45 |
| 10 | Ծաղկալանջ | 1730 | 600 | 698 | 38 | 54 | 190 | 1298 | 150 |
| 11 | Ծաղկունք | 1388 | 691 | 697 | 48 | 51 | 190 | 877 | 222 |
| 12 | Ծիածան | 1360 | 691 | 669 | 51 | 55 | 183 | 946 | 125 |
| 13 | Հայթաղ | 2958 | 1522 | 1436 | 152 | 142 | 422 | 1918 | 324 |
| 14 | Հովտամեջ | 1477 | 728 | 748 | 55 | 45 | 203 | 1052 | 122 |
| 15 | Մոնթեավան | 873 | 446 | 427 | 37 | 33 | 110 | 612 | 81 |
| 16 | Մրգաստան | 1155 | 564 | 591 | 45 | 39 | 149 | 768 | 154 |
| 17 | Շահումյան | 1627 | 801 | 826 | 52 | 59 | 231 | 1175 | 110 |
| **Ընդհանուր** | | **33068** | **16122** | **16365** | **1339** | **1359** | **4472** | **22467** | **3491** |

## 2.3 Բնակչության սոցիալական կազմը

Ա.2

| Սոցիալական կազմը | Թիվը |
|---|---|
| Տնտեսությունների թիվը | 7001 |
| Թոշակառուներ | 3513 |
| Փախստականներ | 74 |
| Երկկողմանի ծնողազուրկ երեխաներ | 8 |
| Միակողմանի ծնողազուրկ երեխաներ | 107 |
| Հայրենական պատերազմի մասնակիցներ | 1 |
| Հաշմանդամներ | 828 |
| Զբաղվածներ | 19430 |
| Գործազուրկներ | 955 |
| Փարոս ընտանեկան նպաստների համակարգում գրանցված ընտանիքներ | 726 |




Խոյ համայնքի վարչական տարածքը կազմում է  11181.03 հա, որից գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 8238.38 հա, բնակավայրի հողեր՝ 2092.40 հա, այլ հողեր 850.25 հա: Համայնքային սեփականության հողերը կազմում են 3101.51 հա, որից գյուղատնտեսական նշանակության հողեր՝ ՝2434.03 հա, բնակավայրերի՝ 436.83 հա, այլ հողեր՝ 230.65 հա:



## 2.4 Համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակը

- Խոյ համայնքի ընդհանուր տարեկան բյուջեն.

Խոյ համայնքի 2022 թվականի պլանավորած ընդհանուր տարեկան բյուջեն կազմում է 1003230.8 հազար ՀՀ դրամ: Համայնքի ընդհանուր եկամուտների մեջ համայնքի սեփական եկամուտների բաժինը կազմում է 306233.3 հազար ՀՀ դրամ,տոկոսային արտահայտմամբ՝ 30.5%:

Խոյ համայնքի 2022թ.նախատեսված եկամուտների, համայնքապետարանի աշխատակազմերի, ենթակարյուջետային հիմնարկների և ՀՈԱԿ-ների հաստիքների վերաբերյալ տեղեկություն.

Ա.3

| | | |
|---|---|---|
| 1 | Համայնքապետարանի աշխատավրձի ֆոնդը | **411288.0** |
| 2 | ՀՈԱԿ-ների աշխատավարձի ֆոնդը | **130825.3** |
| 3 | Ընդամենը 3=1+2 | **542113.3** |
| 4 | Ընդամենը եկամուտներ 2022թ. | **1003230.8** |
| 5 | Սեփական եկամուտներ | **306233.3** |

- Համայնքի հիմնական արդյունաբերական ձեռնարկություններըև արդյունաբերական արտադրանքը, հիմնական սպառման շուկաները.

Խոյ համայնքում արդյունաբերությունը համեմատաբար թույլ է զարգացած: Համայնքում բիզնես միություններ / առևտրի պալատներ, մասնավոր հատվածի իրավաբանական անձանց միություններ և այլն/ չկան, համայնքի գործարար միջավայրը սահմանափակվում է համայնքում գործող 21 արտադրական ՍՊԸ-ներով ԱՁ-ներով,առևտրի 148 մանր կետերով, սակայն,դրանով հանդերձ, միևնույն է, համայնքում բիզնեսի վիճակն առանձնապես բարվոք համարել չի կարելի: ՓԲԸ-ների, ՍՊԸ-ների և ձեռնարկատերերի կողմից կազմակերպվում են հացի և թարմ ալյուրե հրուշակեղենի, կաթնամթերքի և այլ արտադրություններ: Արտադրված արտադրանքի սպառման հիմնական շուկան Հայաստանի Հանրապետությունն է: Արդյունաբերության մեջ առավել մեծ տեսակարար կշիռ ունի սննդի արդյունաբերությունը: Համայնքի բնակչությունն ըստ զբաղվածության բաժանվում է մի քանի խմբի՝ մանր և միջին առևտրով զբաղվողներ, պետական և տեղական ինքնակառավարման կառուցվածքներում աշխատողներ, գործազուրկներ, սեզոնային շինարարություններում աշխատողներ, սպասարկման ոլորտում աշխատողներ:

Համայնքի մարդկանց /տնտեսությունների / ներգրավվածությունը ըստ ճյուղերի.

Ա.4

| Ճյուղի անվանումը | Համայնքի մարդկանց /տնտեսությունների ներգրավվածությունը ճյուղի մեջ |
|---|---|
| Գյուղատնտեսություն | 60% |
| Առևտուր | 25% |
| Ծառայություններ | 10% |
| Արդյունաբերություն և նյութական արտադրություն | 5% |

| Գործունեության տեսակ | Քանակ |
|---|---|
| Առևտուր այդ թվում՝ | 119 |
| Պարենային ապրանքների վաճառք | 80 |
| Ավիատոմսերի վաճառք | 0 |
| Շինանյութի վաճառք | 10 |
| Հագուստի վաճառք | 4 |
| Կոշիկների վաճառք | 0 |
| Ոսկու խանութներ | 0 |
| Ավտոպահեստամասեր | 3 |
| Դեղատուն | 9 |
| Բենզալցակայան | 8 |
| Գազալցակայան | 5 |

| Գործունեության տեսակ | Քանակ |
|---|---|
| Արտադրություններ այդ թվում՝ | 21 |
| Հացի արտադրություն | 7 |
| Կարի արտադրություն | 0 |

| | |
|---|---|
| Հրուշակեղեն | 0 |
| Եվրոպատուհանների և դռների արտադրություն | 5 |
| Կահույքի արտադրություն | 0 |
| Լիմոնադի արտադրություն | 2 |
| Կաթնամթերքի արտադրություն | 1 |
| Եռակցումով մետաղական իրերի արտադրություն | 2 |
| Էլ.էներգիայի արտադրություն | 4 |

| Գործունեության տեսակ | Քանակ |
|---|---|
| Ծառայություններ այդ թվում՝ | 29 |
| Վարսավիրանոցներ | 10 |
| Ռեստորաններ | 4 |
| Սրճարաններ, բիստրոներ | 2 |
| Բանկեր | 0 |
| Հյուրատներ(guesthouse) | 0 |
| Ավտոտեխսպասարկում | 9 |
| Ատամնաբուժական ծառայություններ | 4 |

- Համայնքի հիմնական գյուղատնտեսական արտադրանքը և ծավալները, հիմնական սպառման շուկաներ.

Գյուղատնտեսական արտադրանքի ծավալները՝ Ա.5

| Արտադրանքի անվանումը | Ծավալներ |
|---|---|
| Կաթ | 2500 տոննա |
| Միս խոզի | 70 տոննա |
| Միս տավարի | 325 տոննա |
| Միս թռչնի | 40 տոննա |
| Միս ոչխարի | 43 տոննա |
| Բուրդ | 11 տոննա |
| Մեղր | 20 տոննա |
| Ձու | 1000200հատ |
| Ցորեն | 3400 տոննա |
| Գարի | 105 տոննա |
| Կարտոֆիլ | 18450 տոննա |

Համայնքի գյուղատնտեսական արտադրանքը սպառվում է՝ Հայաստանի Հանրապետությունում և արտերկրում:

## Զբոսաշրջային հետաքրքրություններ կայացնող բնական պատմական և մշակութային հուշարձաններ.

Խոյի տարածաշրջանում կան պատմամշակութային օջախներ, ճարտարապետական հուշարձաններ: Մեղմ, բարեխառն կլիման թույլ է տալիս կլոր տարին վայելել հարուստ ու գունեղ բնությունը: Տարածքում առկա են զբոսաշրջային որոշ ենթակառուցվածքներ, որոնք փորձի և տեղեկատվության պակասի պատճառով լիարժեք չեն գործում և հաստատուն եկամուտներ չեն ապահովում ծառայություններ մատուցողներին: Այս ամենը մեծ ռեսուրս է, որը ճիշտ ներկայացնելու և մատուցելու դեպքում կարող է համայնքի զարգացմանը մեծ խթան հանդիսանալ:

## Խոյի տարածաշրջանում՝ զբոսաշրջային հետաքրքրություններ առաջացնող պատմամշակութային հուշարձաններ

Ա.6

| Հուշարձան | Կառուցված | Հավելյալ նշումներ |
|---|---|---|
| Սբ. Թարգմանչած վանք | 5-7-րդ դարեր | Այգեշատ |
| Սբ Աստվածածին եկեղեցի | 10-րդ դար | Այգեշատ |
| Հայրենական պատերազմում զոհվածների հուշարձան | 1960 -ական թթ | Այգեշատ |
| Քառօրյա պատերազմում զոհվածների նվիրված խաչքար | 2018թ | Այգեշատ |
| Դամբարանադաշտ | ՆՔ 2-րդ. -1-ին հազարամյակ | Այգեշատ |
| Սուրբ Ամենափրկիչ եկեղեցի | 16-րդ դար | Ծաղկալանջ |
| Սուրբ Հովհաննես եկեղեցի | 18-րդ դար | Մրգաստան |
| ՀՄՊ զոհերի հուշարձան | 1985թ | Դողս |
| Հուշահամալիր | 1996 թ | Լեռնամերձ |
| 2-րդ համաշխարհային պատերազմին նվիրված հուշարձան | 1984թ | Մրգաստան |
| <<Սուրբ Մարիամ Աստվածածին>> եկեղեցի | 2010թ | Շահումյան |
| <<Սուրբ Թուխ Մանուկ>> մատուռ | 2012թ | Շահումյան |
| <<Բոլոր ժամանակներին նահատակված Աղավնատունցիների>> հուշարձան | 2009 թ | Աղավնատուն |
| Սուրբ Աննա եկեղեցի | 2012թ | Աղավնատուն |
| Սրբ. Ծիրանավոր | 10-11րդ | Աղավնատուն |
| Սրբ. Աստվածածին եկեղեցի | 1860թ | Աղավնատուն |
| Սրբ. Կարմրավոր եկեղեցի | 17-18դդ | Աղավնատուն |
| Ամրոց | Մթա 2-1 հզմ | Աղավնատուն |
| <<Գյումբազ>> դամբարան | 14-րդ դար | Աղավնատուն |
| Սրբ Կարապետ | 19-րդ դար | Աղավնատուն |
| Հայրենակա և Արցախյան | 1988թ | Ամբերդ |
| խաչքար | 2010թ | Ծիածան |
| 1941-1945 Հայրենական Մեծ պատերազմի հաղթանակին նվիրված | 1987թ | Հայթաղ |
| Սուրբ Հարություն եկեղեցի | 13-րդ դար | Գեղակերտ |
| Հայրենական պատերազմի զոհերի հիշատակին նվիրված | 1980թ | Արազած |
| Հայրենական պատերազմի զոհերի հիշատակին նվիրված | 1988թ | Արշալույս |

Խոյի համայնքի և ARMENIAN FUND FOR SUSTAINABLE DEVELOPMENT համագործակցությամբ կիրականացվի << Ագրոտուրիզմի զարգացումը Հայաստանում>>ծրագիրը:

Նպատակ

Պահպանել զբոսաշրջային գրավչությունները, վերականգնել հյուրասիրության ավանդույթները, բարելավել հյուրընկալման ծառայությունների որակը, զբոսաշրջային կառույցները և ենթակառուցվածքները, խրախուսել մասնավոր հատվածի մասնակցությունը զբոսաշրջության ոլորտ: Տարբեր մարքեթինգային գործիքների միջոցով պոտենցիալ զբոսաշրջիկների շրջանում բարձրացնել Խոյ համայնքի զբոսաշրջային գրավչությունը:

- Դպրոցական, նախադպրոցական և արտադպրոցական կրթական հաստատություններ.

- Տվյալներ նախադպրոցական հաստատությունների մասին. Ա.7

| Հաստատության անվանումը | Ստեղծման տարին | Երեխաների թիվը | Աշխատողների թիվը |
|---|---|---|---|
| Գեղակերտի <<Գառնիկ Կարապետյանի անվան>> մանկապարտեզ ՀՈԱԿ | 2011 | 83 | 13 |
| Արշալույս գյուղի <<Արշալույսի մանկապարտեզ>> ՀՈԱԿ | 2015 | 126 | 19 |
| Արագած գյուղի <<Արագած համայնքի մանկապարտեզ>> ՀՈԱԿ | 2011 | 90 | 14 |

## Դպրոցներ

| Հ/Հ | Հաստատության անվանումը | Աշխատողհամայնքից | Սովորողներիքանակ | Դպրոցի հնարավորությունները /աշակերտ/ |
|---|---|---|---|---|
| 1 | Այգեշատի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ | 21 | 200 | 600 |
| 2 | Ծաղկալանջի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ | 20 | 207 | 180 |
| 3 | Դողսի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ | 21 | 167 | 230 |
| 4 | Դաշտի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ | 20 | 138 | 200 |
| 5 | Հովտամեջի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ | 32 | 142 | 220 |
| 6 | Լեռնամերձի հիմնական դպրոց ՊՈԱԿ | 11 | 27 | 0 |
| 7 | Կամո Հարությունյանի անվան միջնակարգ դպրոց ՊՈԱԿ | 22 | 123 | 280 |
| 8 | «Շահումյանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ | 21 | 212 | 336 |
| 9 | Աղավնատան միջնակարգ դպրոց ՊՈԱԿ | 50 | 351 | 650 |
| 10 | Հ. Նավասարդյանի անվան միջնակարգ դպրոց ՊՈԱԿ | 18 | 231 | 450 |
| 11 | Հայթաղի Հրայր Կարապետյանի անվան միջնակարգ դպրոց ՊՈԱԿ | 35 | 395 | 300 |
| 12 | Գեղակերտի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ | 31 | 281 | 600 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 13 | <<Արշալույսի Ս. Գրիգորյանի անվան միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ | 36 | 482 | 482 |
| 14 | Արագածի Մ. Մեխակյանի անվան միջնակարգ դպրոց ՊՈԱԿ | 30 | 250 | 350 |
| 15 | Ծիածանի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ | 17 | 287 | 500 |

Տվյալներ արտադպրոցական հաստատությունների վերաբերյալ Ա.8

| Հաստատության անվանումը | Սովորողների թիվը | Աշխատողների թիվը |
|---|---|---|
| «Մշակույթ և սպորտ» ՀՈԱԿ | 160 | 11 |
| | | |
| | | |

Տվյալներ մշակութային հաստատությունների վերաբերյալ

| Մշակութային հաստատություններ | Ընդհանուր տվյալներ | | | |
|---|---|---|---|---|
| | Գրքային ֆոնդ | Տարեկան հաճախումներ | Ընթերցողներ | Այլ |
| Գրադարան | 104397 | 28524 | 2658 | |

Խոյ համայնքի առողջապահական ծառայություններ մատուցող կազմակերպություններ.

Համայնքում գործում է 11 բուժհաստատություն, որտեղ իրականացվում է ամբուլատոր սպասարկում՝ Ա.9

| Հ/Հ | Կազմակերպության անվանումը |
|---|---|

| | |
|---|---|
| 1 | Այգեշատի ԲԱ ՀՈԱԿ |
| 2 | Ծաղկալանջի ԲՄԿ |
| 3 | Դաշտի ԲՄԿ |
| 4 | Լեռնամերձի ԲՄԿ |
| 5 | Մրգաստանի ԲՄԿ |
| 6 | Շահումյանի ԲԱ ՀՈԱԿ |
| 7 | Աղավնատան ԲԱ ՀՈԱԿ |
| 8 | Հայթաղի ԲԱ ՀՈԱԿ |
| 9 | Արշալույսի ԲԱ ՀՈԱԿ |
| 10 | Գեղակերտի ԲԱ ՀՈԱԿ |
| 11 | Արագածի ԲԱ ՀՈԱԿ |

Փարոս ընտանեկան նպաստների համակարգում գրանցված ընտանիքներ Ա.10

| | |
|---|---|
| Ընտանեկան նպաստների համակարգում գրանցված ընտանիքներ | 726 |

5822 գրանցված գործազուրկների կրթական մակարդակը Ա.11

| Կրթություն | Քանակ |
|---|---|
| Բարձրագույնկրթություն | 661 |
| Միջին մասնագիտական կրթություն | 1024 |
| Միջնակարգ կրթություն | 3700 |
| տարրական | 437 |

## 2.5 Համայնքում իրականացվող ծրագրերը

Համայնքի և պետբյուջեի համաֆինանսավորմամբ (սուբվենցիա) իրականացվող ծրագրեր՝

1. Խոյ համայնքի Գեղակերտ, Մոնթեավան, Այգեշատ, Լեռնամերձ բնակավայրերի փողոցների ասֆալտապատում, Դոդս- Աղավնատուն ճանապարհի ասֆալտապատում: Ծրագրի ընդհանուր արժեքը՝221000000 ՀՀ դրամ , որից համայնքի մասնակցությունը՝ 143650000 ՀՀ դրամ :
2. Խոյ համայնքի Արշալույս բնակվայրի փողոցային լուսավորության ընդլայնում և Շահումյան բնակավայրի փողոցների լուսավորության ցանցի կառուցում: Ծրագրի ընդհանուր արժեքը՝43000000 ՀՀ դրամ , որից համայնքի մասնակցությունը՝ 23650000 ՀՀ դրամ :
3. Խոյ համայնքի Հայթաղ և Այգեշատ բնակավայրի մանկապարտեզների վերանորոգում /վերակառուցման/ աշխատանքներ: Ծրագրի ընդհանուր արժեքը՝ 50000000 ՀՀ դրամ , որից համայնքի մասնակցությունը՝ 15000000 ՀՀ դրամ :
4.Խոյ համայնքի Ծաղկալանջ բնակավայրի խմելու ջրի ցանցի հիմնանորոգում /վերակառուցում/: Ծրագրի ընդհանուր արժեքը՝ 40000000 ՀՀ դրամ , որից համայնքի մասնակցությունը՝ 16000000 ՀՀ դրամ :
5.Խոյ համայնքի Մոնթեավան և Արագած բնակավայրերի հուշարձան-պուրակների կառուցում: Ծրագրի ընդհանուր արժեքը՝ 25000000 ՀՀ դրամ , որից համայնքի մասնակցությունը՝ 17500000 ՀՀ դրամ :
6. Խոյ համայնքի Արշալոիյս, Հայթաղ, Ծաղկունք, Մրգաստան, Ամբերդ, Ծաղկալանջ բնակավայրերի խորքային հորերի հիմնանորոգում և Ծիածան բնակավայրի ներտնտեսային ոռոգման ջրագծերի կառուցում: Ծրագրի ընդհանուր արժեքը՝ 315000000 ՀՀ դրամ , որից համայնքի մասնակցությունը՝ 126000000 ՀՀ դրամ :

7. Խոյ համայնքի Արշալույս, Աղավնատուն, Մոնթեավան բնակավայրի զազատարի կառուցում: Ծրագրի ընդհանուր արժեքը՝ 67000000 ՀՀ դրամ , որից համայնքի մասնակցությունը՝ 36850000ՀՀ դրամ :
8.Խոյ համայնքի Դաշտ բնակավայրի մշակույթի տան տանիքի նորոգում, Արագած համայնքի մշակույթի

տան 2-րդ և 3-րդ հարկերի վերանորոգում և ջեռուցում: Ծրագրի ընդհանուր արժեքը՝ 70000000 ՀՀ դրամ , որից համայնքի մասնակցությունը՝ 424150000 ՀՀ դրամ :

## 2.6 Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումները

/Հազար դրամ/

Ա.12

| Հ/Հ | Մուտքերի անվանումը | 2022թ. Նախա տեսված | 2023թ. Կանխա տեսվող | 2024թ. Կանխա տեսվող | 2025թ. Կանխա տեսվող | 2026թ. Կանխա տեսվող |
|---|---|---|---|---|---|---|
| I. | ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ | 1003230.8 | 1023265.0 | 1043733.4 | 1057199.5 | 1077119.3 |
| 1. | ՀԱՐԿԵՐ և ՏՈՒՐՔԵՐ | 252656.6 | 257709.7 | 262863.9 | 270749.9 | 278872.4 |
| 1.1 | Գույքային հարկեր անշարժ գույքից | 128299.4 | 130865.3 | 133482.7 | 137487.2 | 141611.9 |
| | Գույքահարկ շենքերի և շինությունների համար | 1262.0 | 1287.2 | 1313.0 | 1352.4 | 1393.0 |
| | Հողի հարկ | 15185.9 | 15489.6 | 15799.4 | 16273.4 | 16761.6 |
| | Անշարժ գույքի հարկ | 111851.5 | 114088.5 | 116370.3 | 119861.4 | 123457.3 |
| 1.2 | Գույքային հարկեր այլ գույքից | 119139.2 | 121522.0 | 123952.4 | 127671.0 | 131501.1 |
| | Գույքահարկ փոխադրամիջոցների համար | 119139.2 | 121522.0 | 123952.4 | 127671.0 | 131501.1 |
| 1.3 | Ապրանքների օգտագործման կամ գործունեության իրականացման թույլտվության վճարներ | 5218.0 | 5322.4 | 5428.8 | 5591.7 | 5759.4 |
| | Տեղական տուրքեր | 5218.0 | 5322.4 | 5428.8 | 5591.7 | 5759.4 |
| 1.4 | Ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից այլ պարտադիր վճարներ | | | | | |
| 2. | ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ | 696997.5 | 710937.5 | 725156.3 | 726541.5 | 736541.5 |
| 2.1 | Ընթացիկ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ | | | | | |
| 2.2 | Կապիտալ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ | | | | | |
| 2.3 | Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներ | 656541.5 | 656541.5 | 656542.5 | 656542.5 | 656542.5 |
| ա) | Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ | 656541.5 | 656541.5 | 656542.5 | 656542.5 | 656542.5 |
| բ) | Պետական բյուջեից տրամադրվող այլ դոտացիաներ | | | | | |
| գ) | Պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումներ(սուբվենցիաներ) | 40456.0 | 54396.0 | 68614.8 | 70000.0 | 80000.0 |
| 2.6 | Պետական բյուջեից տրամադրվող կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ | | | | | |
| 3. | ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ | 53576.7 | 54617.8 | 55713.2 | 59908.1 | 61705.4 |
| 3.1 | Տոկոսներ | | | | | |
| 3.2 | Շահաբաժիններ | | | | | |
| 3.3 | Գույքի վարձակալությունից եկամուտներ | 10348.7 | 10555.8 | 10769.9 | 13295.1 | 13694.1 |
| | Համայնքի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ | | | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | Համայնքի վարչական տարածքում գտնվող պետության և համայնքի սեփականությանը պատկանող հողամասերի կառուցապատման իրավունքի դիմաց գանձվող վարձավճարներ | 8293.7 | 8459.6 | 8631.9 | 11093.0 | 11425.8 |
| | Այլ գույքի վարձակալությունից մուտքեր | 2055.0 | 2096.2 | 2138.0 | 2202.1 | 2268.2 |
| 3.4 | Համայնքի բյուջեի եկամուտներ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից, այդ թվում | | | | | |
| | Պետության կողմից ՏԻՄ-երին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցներ | | | | | |
| | Վարձատրվող հասարակական աշխատանքներ | | | | | |
| 3.5 | Վարչականնն գանձումներ | 41229.8 | 42054.4 | 42895.5 | 44182.3 | 45507.8 |
| | Տեղական վճարներ | 38483.0 | 39252.7 | 40037.8 | 41238.9 | 42476.1 |
| | Համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների օրինականացման համար վճարներ | 2746.8 | 2801.7 | 2857.7 | 2943.4 | 3031.7 |
| 3.6 | Մուտքեր տույժերից, տուգանքներից | 1998.2 | 2007.6 | 2047.8 | 2430.7 | 2503.5 |
| | Վարչական իրավախախտումների համար ՏԻՄ-երի կողմից պատասխանատվության միջոցների կիրառումից եկամուտներ | 300.0 | 306.0 | 312.1 | 321.5 | 331.1 |
| | Մուտքեր համայնքի բյուջեի նկատմամբ ստանձնած պայմանագրային պարտավորությունների չկատարման դիմաց գանձվող տույժերից | 1698.2 | 1701.6 | 1735.7 | 2109.2 | 2172.4 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Գ | ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ(1+2+3+4) | | | | | |
| 1. | Հիմնական միջոցների իրացումից մուտքեր | | | | | |
| | Անշարժ գույքի իրացումից մուտքեր | | | | | |
| | Շարժական գույքի իրացումից մուտքեր | | | | | |
| | Այլ հիմնական միջոցների իրացումից մուտքեր | | | | | |
| 2. | Պաշարների իրացումից մուտքեր | | | | | |
| 3. | Բարձրարժեք ակտիվների իրացումից մուտքեր | | | | | |
| 4. | Չարտադրված ակտիվների իրացումից մուտքեր | | | | | |
| | Հողի իրացումից մուտքեր | | | | | |
| | Ոչ նյութական չարտադրված ակտիվների իրացումից մուտքեր | | | | | |
| | ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՎԵԼՈՒՐԴԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՄ ՊԱԿԱՍՈՒՐԴԻ (ԴԵՖԻՑԻՏԻ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ(Ա+Բ) | | | | | |
| Ա. | ՆԵՐՔԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ(1+2) | | | | | |
| 1. | ՓՈԽԱՌՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ | | | | | |
| 1.1 | Արժեթղթեր | | | | | |
| | -թողարկումից և տեղաբաշխումից մուտքեր | | | | | |
| | -հիմնական գումարի մարում | | | | | |
| 1.2 | Վարկեր | | | | | |
| | -վարկերի ստացում | | | | | |
| | -ստացված վարկերի հիմնական գումարի մարում | | | | | |
| 1.3 | Փոխատվություններ | | | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | -բյուջետային փոխատվությունների ստացում | | | | | |
| | -ստացված փոխատվությունների գումարի մարում | | | | | |
| 2. | ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ | | | | | |
| 2.1 | Բաժնետոմսեր և կապիտալ այլ մասնակցություն | | | | | |
| 2.2 | Փոխատվություններ | | | | | |
| | -նախկին տրամադրված փոխատվությունների դիմաց ստացվող մարումներից մուտքեր | | | | | |
| | -փոխատվությունների տրամադրում | | | | | |
| 2.3 | Համայնքի բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդը | | | | | |



## 3. Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ

| Հիմնականխնդիրներ | Պատճառ | Հետևանք |
|---|---|---|
| Համայնքի բնակչության սոցիալական պաշտպանություն | Սոցիալական ծրագրերի միօրինակություն և պակաս,ոչ ճիշտ հասցեականություն, իրազեկության պակաս, գործազրկություն, բազմազավակ ընտանիքների կարիքների ցածր կենսամակարդակ, աշխատատեղերի պակաս | Աղքատության աճ, արտագաղթ, սոցիալական լարվածության աճ, ամուսնալուծությունների թվի աճ, ծնելիության պակաս, զարգացման տեմպերի ոչ բավարար մակարդակ |
| Գործարար միջավայրի բարելավում և ձեռնարկատիրության խթանում | Օրենսդրական դաշտ, համախմբվածության պակաս, շուկայի ոչ թափանցիկություն, գործարար հմտությունների և գիտելիքների պակաս, իրազեկման պակաս, ներդրումային ծրագրերի ֆինանսական դժվարություններ, վարկերի բարձր տոկոսադրույքներ | Տնտեսությունը զարգացած չէ, արտադրական ձեռնարկությունների սակավություն, գնաճ, աշխատատեղերի փոքր թվաքանակ |
| Համայնքի գույքի կառավարում | տեղեկատվության պակաս, կառավարչական հմտությունների պակաս | Արդյունավետության բացակայություն |
